

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 ORD 11#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ	<i>հմբազրման ամսաթիվ 18/11/14</i>	<i>հմբազրություն 5</i>	<i>էջ 1/1</i>

ՆՊԱՏԱԿԸ

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության հետ կապված անձանց հետ գործառնությունների իրականացման կարգի (այսուհետ՝ Կարգ) նպատակն է սահմանել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հետ կապված անձանց հետ իրականացվող գործառնությունների սկզբունքներն ու ընդհանուր պայմանները:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Կարգը կիրառվում է Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից:

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք	
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ աշխատակիցներին սպառողական վարկերի տրամադրման կարգ	ACBA 75 ORD 10
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ավանդների ընդունման ընթացակարգ	ACBA 75 PR 09

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿՎՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Բանկի հետ կապված անձինք»՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված անձինք:

ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ

1.1. Բանկի հետ կապված անձինք վարկավորվում են համաձայն տվյալ պահին Բանկում գործող համապատասխան ներքին իրավական ակտերի:

1.2. Բանկի աշխատակից հանդիսացող Բանկի հետ կապված անձինք սպառողական վարկերը ստանում են նույն պայմաններով (համաձայն «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ աշխատակիցներին սպառողական վարկերի տրամադրման կարգի [ACBA 75 ORD 10](#)), ինչ պայմաններով ստանում են Բանկի այն աշխատակիցները, որոնք չեն հանդիսանում Բանկի հետ կապված անձինք:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑԻՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

2.1. Բանկի հետ կապված անձանցից (բացառությամբ՝ սույն կարգի 2.2 կետում նշված անձանց) ավանդները ներգրավվում են համաձայն տվյալ պահին Բանկում գործող համապատասխան ներքին իրավական ակտերի:

2.2. Բանկի, «ԱԳԲԱ ԼԻՋԻՆԳ» ՎԿ ՓԲԸ, «ԱԿԲԱ ԲՐՈԿ» ՍՊԸ և «ԱՍՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՉՄԵՆԹ» ՓԲԸ աշխատակից հանդիսացող Բանկի հետ կապված անձանցից ավանդները ներգրավվում են նույն պայմաններով (համաձայն «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ավանդների ընդունման ընթացակարգի [ACBA 75 PR 09](#)), ինչ պայմաններով ներգրավվում են Բանկի, «ԱԳԲԱ ԼԻՋԻՆԳ» ՎԿ ՓԲԸ և «ԱՍՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՉՄԵՆԹ» ՓԲԸ այն աշխատակիցներից, որոնք չեն հանդիսանում Բանկի հետ կապված անձինք:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԱՅԼ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.1. Բանկի հետ կապված անձինք, բացառությամբ սույն կարգի 1-ին գլխի 1.2 կետում, ինչպես նաև 2-րդ գլխի 2.2 կետում նշված գործառնությունների, այլ բանկային գործառնություններից (մասնավորապես հաշիվների սպասարկում, փոխանցումներ, քարտերով գործառնություններ և այլն), օգտվում են նույն պայմաններով, ինչ պայմաններով օգտվում են Բանկի հետ կապված անձ չհանդիսացող հաճախորդները:

ԳԼՈՒԽ 4. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 12-ից:

4.2. Սույն կարգն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում Բանկի խորհրդի 15.02.2013թ. հաստատած «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ հետ կապված անձանց հետ գործառնությունների իրականացման կարգը: